Ա Ւ Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ, ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ԳՐԱՔԻՏԱԿԱՆ

ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԸՆԹԱՑԻՆ ՏԱՐԻ

ՌՃԺԵ

ՕՐԱԹՈՒԹԵԱՄԲ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1866

ԱՄՍԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ· ԹԻՒ 4· ՀՐՋԱՆ ՄԻԱՍԵԱՅ ԱՊՐԻԼ 1866

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ· — ՍԱՂՈՒԿԵՑԻՔ

Մ՚ԱՐԴՍ իբր արարած բանական, իւր բանականութեանը մէջ կը պարունակէ զօրութեամբ յաւիտենականութեան գաղափար մի: Երբ կը տեսնենք անոր զարմանալի գործքերը ու ձեռնարկութիւնները եւ երբ կը յիշենք իւր մարմնաւոր գոյութեան կամ կենաց ժամանակաւոր ու վաղանցիկ ըլլալը, իրաւամբ կը մակաբերեմք անոր հոգիեանը մէջ դէպ՚ի յաւիտենականութիւն և դէպ՚ի անմահութիւն ունեցած մղիչ զօրութիւնը, որ մարդոյս ամեն գործքերը եւ մինչեւ անգամ խորհուրդները միաքն ու հոգին դէպ՚ի նոյն նպատակին կ՚ուղղէ: Ուրեմն ըսել է թէ մարդս յաւիտենականութեան համար ստեղծուած է· և իւր անձնաւորութեան մէկ մասը բնական օրինաց պահանջմամբը յաւիտենականութիւն դառնալէն յետոյ, միւս մասն ալ Աստուածադիր օրինաց պահանջմամբ անապական եւ անմահ մնալու սահմանուած է: Մարդս մէկ մասամբ, այսինքն մարմնովը՝ երկրաքարշ կիրքերով տոգորեալ ըլլալով, դէպ՚ի յաւիտենականութիւն կը հակի, և յերկիր՝ ուսկէ ստեղծուեցաւ· իսկ միւս մասամբ, այսինքն հոգւովը դէպ՚ի յերկինս կը սլանայ, ուսկէ կ՚առնու իւր ծնունդը, և ուսկէ ընդունած է իւր գոյութիւնը Աստուածաշունչ կենդանութեամբը:

Այս անհերքելի ճշմարտութիւնը

թէպէտ և մարդոյս սորվեցընողը նոյն իսկ մարդն է, բայց որպէս զի մարդկային այս գիտակցութեան սորվեցուցած վարդապետութիւնը հեղինակութեան կերպարանք մի ունենայ, հաստատուած է Կրօնքը, որոյ մէջ կը պարունակի ուրիշ շատ ճշմարտութիւններ, այսինքն Աստուծոյ գոյութիւնը, անմահութիւնը, և երբեմն անձնասրտութեան խորհուրդը, երկրորդ անձին մարդեղութիւնը, հանդերձեալ կեանքը, և կրկին հաստատմունքները, եւայլն, որոնք քրիստոնէական վարդապետութեան մէջ կը պարունակին և հաւատոյ էական մասեր կը համարուին։

Կրօնքը որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ եւ մարդոյս մէջ եղած առընչական յարաբերութեանց ուսմունքը, զանազան կերպերու կը բաժնուի, ըստ զանազան կարծեաց ժողովրդոց եւ կամ անհատից. վասն որոյ առ հասարակ ամէն մարդիկ ամբողջապէս կամ միակերպ ըմբռնած չեն Կրօնքին սորվեցուցած բոլոր ճշմարտութիւնները. և եթէ աշխարհիս բոլոր մարդկանց մէջ Կրօնի նկատմամբ կարծեաց համաձայնութիւն մի կայ, այն է, նախ՝ Աստուծոյ ճշմարիտ գոյութեան, և երկրորդ՝ մարդկային հոգւոյն գոյութեանն և անմահութեան, և հետեւապէս առնոյ յարութեան վարդապետութեանը մէջ։ Աշխարհիս որ հեռաւոր և անծանօթ կողմն ալ պտըտելու ըլլաս, ըսած ճշմարտութիւնս կայանի պիտի երեւի զանազան սեռի մարդոց վերայ և անոնց պաշտամունքներուն մէջ։

Ահա ըսելիքը միմիայն մարդկային հոգւոյն ճշմարիտ գոյութեանը եւ անոր անմահութեանը վերայ պիտի ըլլայ, բայց իբր ներածութիւն խօսինք նախ Պադուկեցւոց պաշտօնին վերայօք, որոնք չէին ընդուներ հոգւոյ յարութիւնը։ Այս պաշտօնը թէպէտ և հիմակ անուամբ չկայ, բայց մարդկութեան մէջէն երբեմն երբեմն խեղճ անհատներ և դասեր և մտածել չգիտցող երկրասէր և ի կրից յաղթեալ անձինքներ իրեն աշակերտած է մինչեւ ցարդ։ Այս օրինակ մեծ ու հինգած վարդապետութիւն մի ցաւօք սրտի պիտի յայտնեմք՝ թէ սպրդած մտած կ'երեւի մեր ազգին մէջ ալ. ոչ միայն նոյն պաշտօնին հետեւողը, այլև որ չարն է՝ ընդրիշներն ալ ի նոյն համակերպել ջանացող։ Խոհուն ու քիչ մի մտածող ողջամիտ անձ մի իսկոյն պիտի իմանայ, թէ այսպիսիներու վարդապետութիւնը ինչ բանի վերայ կը կայանայ, և թէ ա՛ւ է իրենց չարժառիթը և առաջնորդը յոյն մեղրութիւն։

Պադուկեցւոց պաշտօնին սկզբնաւորութիւնը վերայօք Հրէից ռաբբիները կը պատմեն, թէ Ք. ետ 250 տարի առաջ Անտիգոնոս Սոխա անուն երեւելի դիտնական մի կար, որ առաջինն եղաւ ասանդո-բիւն ընդունողներէն. և որովհետեւ ասիկայ սա սկզբունքն ունէր, թէ բարիք ընել պէտք է միմիայն բարւոյ համար և ոչ հատուցումն ընդունելու սկզբնակալութեամբ, իբր աշակերտաց մէջէն երկու հոգի, Պադոք կամ Պադոքն ու Նայիմոս, իրենց վարդապետին այս սկզբունքէն հետեւցուցին հանդերձեալ կենաց վարձուց ու պատժոյ հատուցումն ուրանալը. և Պադոքի անուամբ իրենց աղանդոյն հետեւողներն ալ Պադուկեցի կոչուեցան։ Այս վարդապետութեան վերայ Յովսեպոս Փլաւիոս հրեայ մատենագրին դրքին մէջ, որ Յիսուսի Ք. ժամանակակից էր,

և թէ սուրբ Աթեոտարանին մէջ տեղ տեղ ակնարկութիւններ կան։

Սադուկեցւոց աղանդը, որ փարիսեցւոց[1] վարդապետութեան ըստ ամենայն մասին ներհակն էր, հետեւեալ չորս կէտերուն վերայ կը կայանար։ Նախ՝ Մովսեսի հնգամատեանին մէջ որոշակի կերպով չգրուած վարդապետութիւնները կը մերժէին, և չէին ընդուներ անդիր աւանդութեանց հեղինակութիւնը։ Երկրորդ, աստուածային նախախնամութիւնը կ'ուրանային, այս մտքով որ ազդեցութիւն չունի ամենեւին մարդոյս վիճակին վերայ, որու բոլոր գործքերը, կ'ըսէին, կատարեալապէս ազատ է, և ինքն է միշտ իւր երջանկութիւնը կամ ապերջանկութիւնն ընողը։ Նոյս սկզբունքիս զօրութեամբ բոլ խոստիւ կը դատէին մարդկային գործքերը, և փարիսեցիներէն խիստ վար կը մնային ներողամտութեան մասին, որոնք ընդհակառակը մեծ զգուշութիւն կը բանեցընէին օրինօք սրբուած պատժոց մէջ, ինչպէս յայտնի է Գործոց Ե. գլխոյն 17 և 34 ու հետեւեալ համարները իրարու հետ բաղդատելով։ Կըսուի թէ Սադուկեցիք ժամանակ մի Մովսէսի օրինաց մէջ համապատիժ հատուցման համար գրուած օրէնքը գործադրել տուին, այն է, աչքը հանողին փոխարէն իւր աչքն ալ հանել, գլուխը պատուղին փոխարէն իւր գլուխն ալ պատուել, իսկ փարիսեցիք մեղմիտական օրինաց այս հատուածները դրամական հատուցման մտօք կ'իմանային։ Նոյս սկզբունքս Սադուկեցւոց անձին վերայ ալ շատ ազդեցութիւն ըրած էր, որոնք ընդհանրապէս սաստիկ պաղարիւն էին, և մարդոց մէջ չէին խառնուէր, և կծու ու զզուելի բնաւորութիւն մի ունէին։ Երրորդ, հոգւոյ անմահութիւնն և հետեւապէս յարութիւնը կ'ուրանային, ինչպէս և հանդերձեալ կենաց մէջ վարձուց և պատժոց հատուցումը։ Չորրորդ, բայ Աստուածոյ ուրիշ անմարմին ոգիներու գոյութիւն չէին ընդուներ, և կը պնդէին՝ թէ ոչ հրեշտակ կան և ոչ դեւք։ Որովհետեւ Մովսէսի վարդապետութիւնը մէջ հրեշտակի խօսք չկայ. իսկ հնգամատեանին մէջ տեղ տեղ հրեշտակներուն յիշատակութիւններ որ կան, կը կարծուի թէ անոնց երեւումը փոխաբերական մըտօք կը մեկնէին։

Սադուկեցւոց սկզբունքը, որ մարդոյս երջանկութիւնը երկրաւոր բարեաց հեշտութեան մէջ կը կայացընէր, հարկաւ մեծ և հարուստ մարդոց կը յարմարէր միայն, վասն որոյ ժողովրդեան մեծագոյն մասը փարիսեցւոց վարդապետութեանց հոգեկանութեանը մէջ աւելի հաճութիւն կ'ատանային։ Նոյս պատճառաւ Սադուկեցի աղանդոյն հետեւողք խիստ քիչ էին, և փարիսեցւոց զօրաւոր ընկերութենէն ճնշուած։ Հռաբպարակական արարողութեանց հաղորդակից կ'ըլլային, բայց զանոնք ընդունելութիւն չէր կըպարտաւորէին փարիսեցւոց սկզբունքներն ալ ակամայ կամօք ընդունելու։ Թէպէտ Մակաբէացւոց իշխանութեան ժամանակ կը պատահէր երբեմն որ արքունեաց վերայ ազդեցութիւն բանեցընելով քաղաքական իշխանութիւնը իրենց ձեռքը եղած կ'ըլլար, բայց այսիկայ թէ քիչ անգամ կը պատահէր

---

(1) Փարիսեցւոց աղանդին սկզբնաւորութիւնն ալ Սադուկեցւոց ժամանակակից կը կարծուի։ Ասոնք ընդհակառակը կ'ընդունէին Աստուածային նախախնամութիւնը, հոգւոց յարութիւնը, հրեշտակաց և դիւաց գոյութիւնը, և անդիր աւանդութիւնները պոնց վերայ հիմնուած էր իրենց աղանդը։

և թէ խիստ քիչ ժամանակ կը տեւէր այն, որովհետեւ իրենց խստութեամբն և մովսիսական օրինաց հաւատակ վարդապետութեամբ ժողովրդոց համակրութիւնը չէին կրնար ստանալ, և իրենց հակառակորդաց հզօր ազդեցութեան չէին կարեր յաղթել։

Ի յաջորդն։

Անգլիան և ռուսական եկեղեցւոյ միաւորութեան խնդիրը։

Ժամերս քանի մի Հայ լրագրաց և հանդէսներու մէջ կարդացած են մերայինք Անգլիական եկեղեցւոյն Ռուսական օրթոտոքսոս եկեղեցւոյն հետ միանալու խնդիրը, որ թէպէտ և ըստ մեզ դժուարին՝ չըսեմ թէ անհնարին ձեռնարկութիւն մի է, այսու ամենայնիւ Անգլիական լրագիրք քիչ շատ կարեւորութիւն տուած են այն խնդրոյն. վասն որոյ հարկ կը համարիմք և մեք քանի մի տեղեկութիւններ տալ կարծեցեալ կրօնական խնդրոյն վրայօք՝ եւրոպական լրագիրներէ առնելով. վասն զի Անգլիական եկեղեցւոյն Ռուսական կամ որ նոյն է Յունական եկեղեցւոյ հետ միանալը՝ մեր ազգային եկեղեցւոյն ալ մօտենալ ըսել է։

Ռոմբական Քրիստոսի Աստուածութիւնը, և քրիստոնէութիւնը իբր պարզ փիլիսոփայութիւն մի ենթադրելով, կ'ուզեն եւ կը պնդեն քրիստոնեայ ձեալ։

Ընդհանուր Ռոմբական քաղքի մեծ համալսարանին մէջ քանի և հինգ տարիէն ի վեր է որ դպրոց մի հիմնարկուած է Տօքթօր Ինւզէի տեսչութեանը տակ, որ Եւրոպայի մէջ եղած պատերազմին գիտցող գիտնականաց երեւելիներէն մէկն է։ Այն դպրոցը, որ Անգլիական եկեղեցւոյ խիստ ջերմ ու մոլեռանդ մասին մէջ հաստատուած է, նպատակ ունէր իրեն՝ ընդհանրական եկեղեցւոյն վարդապետութենէն ընդունել բոլոր հարկաւոր եղած մասերը առանց բողոքականութիւնը ձգելու։ Ինւզէութեան դպրոցի ամենէն երեւելի անդամները իրենց գաղափարները յայտնած են գրութեամբ մի Ռ՛ոո ի վերայ ներկայ ժամանակիս ըսուած, որ խորին ազդեցութիւն մի ըրած է Անգլիոյ մէջ։ Անգլիական եկեղեցւոյ մէջ կամաց կամաց սկսաւ տեսակ մի եկեղեցի հաստատուիլ, ինչպէս ըսինք, Ինւզէի տեսչութեանը տակ, որ գլուխ աշակերտները բողոքականութիւնը կաթոլիկութենէ բաժնող վերջին սահմանագլուխը բերաւ հաստատ, ուսկէ ալ անդին աւելի հեռանալու քան չմտադրուց։ Բայց իւր հետեւողներէն շատերը աւելի կտրուկ ու համառօտ քայլ մի ըրին, զոր ինքը չէր ուզած ընել։ Տօքթօր Ինւզէ այսպէս երկու եկեղեցիները իրարմէ աւելի ջը հեռանալու համար սահման մի որոշեց, որ կ'երեւար թէ կաթոլիկութեան մօտենալու նշան մի էր, բայց հիմակ կ'երեւի որ ինքն իւր պըզտիկ ժողովրդովը օրթոտոքսոս եկեղեցւոյն ծոցը մտնելու կը մօտենայ։

Այս նպատակաւ մօտերս Ռուսական և Անգլիկան եկեղեցւոյ քանի մի եպիսկոպոսաց մէջ խորհուրդ եղած է, որոշում մի տալու համար։ Գիտենք որ Անգլիկան Եկեղեցւոյ երկու բան կը պակսի, մէկ մի հնութիւն, երկրորդ՝ առաքելութիւն. եւ խորհուրդը յառաջ տանելու դրդիռ եղողները կը յուսային որ բողոքականաց և Յունաց մէջ միաբանութիւն հաստատելով այս երկու առաւելութիւնները ընդունել տան Անգլիկան եկեղեցւոյն։ Ասոր համար Գալմէրսթոն բողոքական եպիսկոպոսաց կարգին մէջ քանի մի տարիէ ասդիճանի եկեղեցականները մոցընելով, և ասոնք ներկայ ժամանակիս գասիօնալիսթ (բանասիրական) ըսուած տեսակ մի կրօնական կուսակցութեան ներշնչութեամբը տոգորուած ըլլալով, բացէ ի բաց արգելք եղան ժողովքին մէջ եղած խորհրդոյն, ըսելով՝ թէ ասոնց ձիգը կաթոլիկութեան կ'առաջնորդէ, ուսկէ ամէն բանէ աւելի իրենք հեռու կենալ կ'ուզեն։

Իսկ Գաղղիոյ մէջ Հռովմէական Ընտրոյն ջերմ կուսակից եղող կղերականք բողոքական և օրթոտոքսոս եկեղեցւոյ միաւորութեան համար եղած խնդրոյն տարբեր տեսութիւն մի տալ կ'ուզեն, ու կը համարին՝ թէ Անգլիկան եպիսկոպոսաց դէպ ի բապտիսթականերուն միտելնին, առաջ եղած դէպ ի կաթոլիկութիւն մոտենալ ըսելէ. մինչեւ անգամ լրագրին մէկը կ'ըսէ, թէ այս օրերս բողոքական մասը Գաղղիոյ մէջ պապական երեւելի եպիսկոպոսաց հետ խորհրդակցելէն յետոյ, և անոնցմէ՝ իբր առաքելական յաջորդներէ օրհնութիւն խնդրելէն զինի, Հռովմ ալ պիտի երթան Պիոս Թ. սրբազան Հայրապետին հետ խօսակցելու։

Այս միաւորութեան խնդրոյն տարբեր տարբեր տեսութիւն տրուելէն, սա կը մակաբերեմք որ բողոքական և ռուսական եկեղեցիներուն միանալը անգործադրելի խնդիր մի է, մանաւանդ որ Անգլիկան եկեղեցւոյ մէջ ալ ամենափոքրիկ մէկ մասն է հետամուտ եղողը այս բանիս. ուսումի հիմակու հիմայ այսպիսի ձեռնարկութեան մի յաջողուելուն խոհուն ու մտածող գլուխը չհաւատար երբեք։ Միթէ բնաւ երկու եկեղեցիք իրարու հետ միանալու ըլլան, անշուշտ քաղաքականութիւնը, ըսել կ'ուզեմ քաղաքական շահերը պիտի ընեն. իսկ քաղաքականութիւն մի որ երբեք հաստատուն սկզբունք մի չէ ունեցեր օտար յարաբերութեանց մասին և չկրնար ունենալ, ըսել է թէ այն ալ չպիտի կարենայ այդ միաւորութեան օգնելու։ Բրիտոնէութեան սկիզբէն ի վեր փորձուած բան մի է որ, աւելի դիւրին եղեր ու յաջողեր է ընդհանուր եկեղեցիի մը պառակտիլ ի մասունս և ազգաին եկեղեցիք զանազան հերձուածներ բաժնուիլ, քան թէ բաժանեալները միաւորել։ Եկեղեցական պատմութեան տեղեակ անձինք իրաւունք պիտի տան ըսածիս. դիտնալով միանգամայն թէ մենք ալ իրենց պէս միութեան փափաքողք ենք, ըստ Տեառն բանի թէ "ուր իմն ժողովեալ երկու կամ երեք յանունն իմ, անդ եմ և ես", ապա որչափ եւս աւելի ներկայ պիտի ըլլայ Տէրն մեր, երբ երկու կամ երեք եկեղեցիք միատեղ ժողովուած ըլլան քրիստոնէական սիրով և բարեացական կապակցութեամբ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄԱՅ ԱՂԲԻՒՐԸ

Աբեսաղամէն գիտեմք որ երբ Հերովդէս Ա. Ասքալէմի մէջ նոր թագաւորի մը ծնունդը լսեց երեք մոգերուն բերնէն, վախնալով որ ջըլլայ թէ Հրէից ազգին ձեռքէն յափշտակած թագաւորութիւնը իր ձեռքէն ալ յափշտակուի, հրաման կ'ընէ իր զօրապետին որ զրկէ նոր երթայ Ասքալէմ, ու թէ հոն եւ թէ անոր բոլորտիքը գտնուած գիւղերուն երիտասարդներէն վար եղած բոլոր տղաքը թրէ անցընէ, որպէս զի իրեն երկիւղ պատճառող նորածին թագաւորն ալ Յիսուսը ա նոնց հետ միասին սպաննուի։ Այս սպէտակի հրամանը դեռ իգործ չը դրուած, Յովսէփ երկնային ազդեցութեամբ մի կ'առնու նորածին մանուկը անոր մօրը հետ մէկտեղ, ու կը փախչի Եգիպտոս Հերովդէսի ձեռքէն։

Երբ ալ ընտանեաց ըրած այս ճանապարհորդութեան վերայօք, զոր ուրբ Աբեսաղամը մեզ չյայտներ ա մենեւին, Եգիպտոսի կողմերը զանազան աւանդութիւններ կը զրուցուին մինչեւ ցայսօր, և այս աւանդութիւնները բոլորն ալ որքան որ քննութեան առնուլը չարժէր երբեք, անոնց ինչ սահմանի հաւատարմութեան արժանիքն իմանալու համար, սակայն սա իրաւ է՝ որ քրիստոնէութեան հին դարերու հաւատացեալք, որ աւելի բարեպաշտական զգացմունքներ կը փնտռէին քան թէ տեղեկութիւններ, կարեւորութիւն տուած էին նոյն ճանապարհորդութեան պատմութեանը. եւ մինչեւ անգամ Բրիտոսի մանկութիւն անուանուած սուտ եւ անվաւեր գիրք մի հրատարակուած էր, որ Հայերէն թարգմանութիւնն ալ կը գտնուի։

Բոլոր այս պատմութեանց մէջ մէկ տարբերութիւն միայն կայ, այն է Բրիստոսի իր մօրը հետ Եգիպտոս փախչելը. բայց ճամբուն վերայ ուր տեղ կայան տալ ուր հանգիստ առնելը ճիշտ նշանակել անհնարին է, առանց մտնելու ենթադրութեանց սահմանը. ուստի այս ենթադրութեան միջոցով է որ հիմակ Ասեղքաղաքի դաշտերուն վրայ եղած բուրգէն քանի մի հարիւր քայլ հեռու ճամբորդներուն աղբիւր մի կը ցուցընեն, որ շատ դարեր քրիստոնէից ուխտատեղի եղած էր, և Մարիամայ Աղբիւր կը կոչուի։ Արիւ ազգաց Վարք Սրբոցի մէջ կը կարդամք, որ տուրբ Կոյսը իր ճամբորդութեան ժամանակ տեղ մի հանգիստ առնելով, իր մանկանը Յիսուսին շորեզենները լուսց այս աղբիւրին մէջ, և այն օրէն ի վեր յիշեալ աղբիւրի ջուրը հրաշքներ գործելու յատկութիւններ ստացաւ։ Բրիստոնէութեան առջի դարերուն մէջ նոյն ա կին քով մատուռ մի շինեցին քրիստոնեայք, եւ երբ Մահմետականք Եգիպտոսի տիրեցին, նոյն տեղացոյն վերայ մզկիթ մի կանգնեցին։ Կանացմանէն մարդիկ այնքան ցաւոց ու վշտակրութեանց ենթակայ եղած են, որ գիւրաւ կը յուսան իրենց վշտացը մէջ գերբնական օգնութիւն ընդունելու Աստուծմէ, որ շատ անգամ շտերուն ընծրհած է և կը շնորհէ միշտ յուսով իրենց ապաւինողներուն. վասն որոյ թէ իսլամք և թէ քրիստոնեայք այս նպատակաւ եկեղեցիներ հանդիպեր են Մարիամայ աղբիւրին գլուխը. առանց փոյթ տանելու թէ արդեօք վաւերական է նոյն

տեղւոյն վերայ սուրբ աւանդութիւնը։ Յամանակ անցնելով սկսաւ քիչ քիչ նուազիլ ուխտի գացողներուն թիւը, և այս օրուան օրս թէ՛ մըզկիթն և թէ մատուռը աւերուած են, և ոչ հետք մի կը ցուցընեն։

Արիամայ աղբիւրին քիչ մի հեռու ծառերով շրջապատած տեղ մի ալ կը ցուցընեն Ճամբորդներուն, և առաջնորդը, որ կամ խոպոպ և կամ մահմետական կ'ըլլան միշտ, ժանտաթղենիի մը դիմաց կանգ կ'առնու ու կը սկսի բացատրելով ըսել, թէ երբ Յովհէփ և Մարիամ զերեզնք հալածող չարագործաց երեսէն կը փախչէին, ժանտաթղենին ինքնին ճեղքուելով անոնց ապաւէն եղաւ։ Ըստ ոտայօդ աւանդութիւնը ինքնին կը ջուսի. վասն զի հիմակուան ժանտաթղենին չկրնար ժամանակակից ըլլալ Մարիամու Եգիպտոս փախչելուն. վասն զի հատարակ ժանտաթղենիի բունին հետ մի եւ նոյն հատուածիւնը ունի. անկէ ի զատ Ֆոնթէնէպլոյի քահանային մէկը Վանսլէպ անուն, որ 1656 ին Ճամբորդութիւն ըրած է այն կողմերը, կը պատմէ թէ հին ժանտաթղենին ծերացած ու հինցած ըլլալով, Կահիրէի Ֆրանչիսկեանները անոր մնացորդ մասունքները բարեպաշտութեամբ մի տեղ ու իրենց եկեղեցւոյն աւանդատան մէջ կը պահէին։ Իսկ այսօրուան տեսնուած ժանտաթղենին կրնայ ըլլալ որ հին արմատին վերայէն եաքէն ծլած մէկ շառաւիղն ըլլայ։

Ըստ ժանտաթղենիին ծառապատ ցանկին վերայ ուրիշ աւանդութիւն մի ալ կայ։ Յաք սը Վիդրէ լատին հեղինակը, որ իւր պատմութիւնը երեքտասաներորդ դարուն մէջ գրած է, կ'ըսէ թէ այս պարտէզին մէջ կը բուսանի բալասանի ծառը, ուսկէ կը վաղէ իւր համանուն իւղը. և կը պատմէ թէ, յիշեալ ծառը որ միայն Աբեսեաց երկիրը՝ Երիքովի մէջ կը դանուի, խիստ հին ժամանակներէն ի վեր Աբեգ քաղաքի դաշտերը փոխադրուած է։ Բրիստոնէից ձեռքովը կը մշակուի, որոնք փարձիւ տեսած են, կ'ըսէ Յաք սը Վիդրէ, որ եթէ իսլամաց ձեռօք մշակուին, անբեր կը մնան, և իւղ չեն տար։

Չորեքտասաներորդ դարուս ուրիշ պատմագիր մի (1), պարզմտութեամբ յաւէտ քան եթէ համզամբ յետագայ պարագաները կը պատմէ սոյն նիւթիս վերայ։ "Երբ որ Աստուածածնին սուրբ կոյսը, անապատանէրն անցնելով՝ հասաւ այս տեղ, դըրաւ դեռնին վերայ իւր զաւակը ուգնաց դաշտը ջուր փնտռելու. բայց չկրցաւ գտնել, ու յաւելով դարձաւ իւր տղուն քով որ աւազին վերայ փռուած պառկած էր. և իւր ոտից գարշապարներով հողը այնքան փռած էր, որ պատուական անուշ ջուր մի բխած էր անկէ։ Ըստ վերայ սուրբ կոյսը խիստ ուրախանալով՝ շնորհակալ եղաւ Տիրոջմէն։ Յետոյ կրկին պառկեցուց Հոն իւր սիրելի որդին, և անոր շրթունքները լուսոյ նոյն ազբիւրին ջուրը և փռեց դեռնին վրայ որ չորնան. և շրթերէն վազած ջրին ամեն մէկ կաթիլներէն մէկ մէկ պըզտիկ տունկեր կը բուսանէին, և անոնցմէ կ'ելնէր բալասանի իւղը, և ամենեւին աչխարհիս ուրիշ կողմերը, բայց ի երկրաւոր դրախտէն, չես կրնար գտնել բալասանի ծառ"։

Ըստպէս ահա միջին դարը աւետարանական ճշմարտութեանց ետեւէ երթալով, որոնք այս սուրբ երկրիս մէջ կենդանի են միշտ, բանաս-

(1) Le seigneur d'Englure.

տեղծութեան ծաղիկները կը ցանէր, որոնք իւր միամիտ ջերմեռանդութեանը տաքութենէն կը փթթէին, և ինքը իւր տղայական բարեպաշտութեանը վարձքը կը գտնէր անոնց քաղցրաբոյր հոտերը վայելելով։ Տասըն եւ ութերորդ դարու պատմագրին մէկն ալ, այն է Խաչակրաց պատմութեան հեղինակ Միշօտը (Michaud) որ իւր կենաց վերջին ժամանակները այցելութեան եկաւ սուրբ երկրին, վերայիշեալ պարզամիտ հեղինակին պատմած կտորը մէջ բերելով այսպէս կը մակաբերէ. «Ո՛նչ միամտութիւն, ինչ ընդհակառակ պարզութիւն է այս վոքրիկ նկարագրութեանս մէջ։ Վ֊երգիլիոսին՝ Պողիտորի ծառին հաճար ըսածը, և Դասսին՝ մագաղաթ անուռուին համար պատմածը ասկէ աւելի բանաստեղծական չեն երեւար ինձ։ Որքան քաղցր էր ինձ եթէ մասնակից ըլլայի միջին դարու մեր ճանապարհորդաց պատրանքներուն, եւ իբրու Ընետարանի խօսքեր ընդունէի անոնց պատմածները։ Մեր գուղջ խելքին և անոր տուած ցաւալի խորհուրդները կ'արժէն արդեօք այն երջանկութիւնը զոր կը զգամք երբ այս պատմուած անմեղ բանաստեղծութեան հաւատալու ըլլանք»։

Բրիստոսի իւր մօրը գիրկը Եգիպտոս փախչելուն հանգամանքները, որ միայն միջին դարու Եւրոպայի հեղինակաց գրքերուն և այն ժամանակի Վրաց Սրբոց ընտրած գրքերուն մէջ կը գտնուէր, և մեր ազգին մէջ ալ միմիայն Բրիստոսի մանկութիւն կոչուած անպիտան գրքոյկովը ծանօթ է, որ այն ալ բարեբաղդաբար խիստ քիչ կը գտնուի, յիշեալ հանգամանքները՝ ինչպէս վերը տեսանք, բանաստեղծական ջերմ ոգիէ յառաջացած վէպեր են՝ քան թէ ճշմարտութիւն։ Ենպէտ և հիմայ միջին դարու պարզմտութիւնը դժուարագիւտ է, որով հաստատուն կը կազմուէր քրիստոնէից հաւատքը, սակայն ունիմք արդ սուրբ Ընետարանի խօսքերը, որոնք մեզ կ'առաջնորդեն նոյն նպատակին, ուր միջին դարու մէջ պարզմտութիւնն էր իրենց առաջնորդը։ Փոխանակ Բրիստոսի Տեառն մերոյ ի տղայութեան ըրած հրաշից, որոնք անընդունելի են մեզ և բոլոր ճշմարիտ քրիստոնէից, թէպէտ եւ երկնից հրեշտակ մի մեզ զանոնք պատմելու ըլլար, ինչպէս որ կը զգուշացնէ զմեզ առաքեալն Պօղոս (1) նըզովքի տակ ձգելով հաւատացողին. սակայն ունիմք առ մեզ Բրիստոսի Տեառն մերոյ մկրտութենէն յետոյ գործած հրաշքներուն բուն իսկ նըկարագրութիւնները և անոնց տեղերը, ունիմք առ մեզ Տնօրինական խորհրդոյ սրբավայրերը, զոր չէ թէ բանաստեղծութեան արդիւնք են, չէ թէ մարդկային պարզմտութեան հնարած վէպեր, այլ սրբազան Ընետարանիչներուն և ականատես պատմիչներուն գործ ու վկայութիւն։ Բանական կը համարիմք զմեզ հաստատուն հաւատք ունենալու համար, հաւատալ այն աշակերտին վկայութեանցը զոր ի Հոգւոյն Սրբոյ ներշընչեալ գրեց, գիտնալով եթէ ճըշմարիտ է նորա վկայութիւնը։ Այս կենդանի հաւատովք և գովելի պարզութեամբ մտայ և սրտի, և ներքին համոզմամբ կը ներկայանայ բարեպաշտ անձը սուրբ Օննդեան տյրը, Պոդդօթայի ստքը եւ ընդհանրապէս Վերեզմանը, և բոլոր այն տեղուանքը, որոնք անխոս վկայներ են Բրիստոսի Տեառն մերոյ հրաշագործու-

(1) Գաղատ. Ա. 8։

թեանց չարչարանացն արտասուացն ու քրտանց։ Որ բարեպաշտ քրիստոնեայն արդեօք նոյն Տնօրինական տեղուանքը անձամբ ներկայանալով՝ գոնէ իւր կենացը մէջ անգամ մի ըլլայ չթափէր իւր աչքերէն քանի մի արտասուքներ, որոնք ճշմարիտ նահատակաց առ սէր Քրիստոսի թափած արեանը չափ արժողութիւն ունին։

ԳԻՏԱԿԱՆ Ր

Գիտութեանց և գեղարուեստից մէջ օր ըստ օրէ եղած զարմանալի յառաջադիմութիւնները տեսնելով, և փափաքելով զանոնք մեր ուսումնասէր ընթերցողաց եւս հաղորդել, գէթ առ ի զուարճութիւն մտաց, յօժարութեամբ պիտի ջանամք երբեմն ամսագրիս միջոցաւ կարեւոր տեղեկութիւններ տալ հետեւելով Եւրոպիոյ ուսումնական Հանդէսներուն, որոնք սոյն տեսակ նիւթերու վերայ նոր հրատարակուած գրքերէն քաղելով կը ներկայացընեն իրենց բաժանորդացը։ Թէ Անգլիոյ համալսարանաց և թէ Գաղղիոյ Սորպոնի և ճեմական իմաստնոց և գիտնաւոր անձանց մէջ տեղի ունեցած բնական իմաստասիրական խնդիրները իւրաքանչիւր ոք առանձին ի զննութիւն առնելով, տպագրութեամբ եւս զանոնք կը հաղորդեն հասարակութեան, որոնք թէ եւ շատ անգամ կարեւորութիւն մի ունեցած չըլլան, սակայն կրնան ուրիշ զօրաւորագոյն հանճարներու պատճառ տալ կատարելութիւն մի ընծայելու խնդրոյ տակ եղած գիւտից և գիտութեանց։ Այսպիսի գիրքեր անպակաս են Եւրոպիոյ մէջ, ինչպէս անցեալները Պոմպէիէն ի վեր անուանուած տետրակ մի հրատարակուեցաւ անգղիերէն լեզուաւ Պ. Ֆարատէ գիտնականին հեղինակութեամբը։ Վեց յօդուած են որոնց մէջ լուսոյ վերաբերեալ քիմիական նութեան վերայ կը խօսի։ Յիշեալ գիտնականը նախ մոմին բաղադրութիւնը կը ցուցընէ՝ անոր զանազան եղանակաւ կազմութիւնը բացատրելով. յետոյ անոր բոլին պայծառութիւնը քննութեան կ'առնու, և կը ցուցնէ կրկին փորձերով իւր անթիւ ունկնդրաց կը դիւրացընէ գիտութիւնը դիւրըմբռնելի ոճով։ Մոմը լուսած առջեւնին դնելով՝ կը յայտնէ անոնց թէ անիկայ վառուելու ու հատնելու համար ինչ կազեր կարեւոր են իրեն։ — Մթնոլորտին մէջ այրող մարմին մի եթէ թթուածնի մէջ դրուելու ըլլայ, աւելի մեծ կարողութիւն կ'ստանայ այրուելու. իսկ ջրածնի մէջ դրուելուն՝ ալ չայրիր, բայց կազը շուտ մի կը սկսի բոցաւորիլ։ — Մարմնոյ այրելի ըլլալէն կը ծագի ջրեղէն շոգին, այնպէս որ՝ բոցին վերայ ցուրտ մարմին մի դնուելուն, օրինակի համար ապակիի մի կտոր, կը տեսնենք որ ջրոյ ամենամանր կաթիլներ կու գան կը խտանան ու կը միաւորին ու կ'ըլլան խոշոր կաթ մի, որ բոցին վերայ կը կախուի։

Երրորդ յօդուածին մէջ քննութեան կ'առնու որ ջուրը, մարմնոյ մի այրուելէն յառաջ կու գայ։ Ջուրը բաղադրածոյ մարմին է, եւ երկու տեսակ կազերէն տարր կը գտնուի իւր մէջը, թթուածին ու ջրածին։ Ասիկայ լաւ պատճառ մի է գիտնականն անգլիացւոյն սոյն երկու մարմիններուն առանձին յատկութեանցը վերայ դաս տալու իւր ունկնդիրներուն. և որպէս զի գաղափարները ա-

ւելի տեւական եղանակաւ մի հաս-
տատէ, յատկութիւններուն մէկուն
վերայ խօսելէն յետոյ՝ պարզ ու գիւ-
րին փորձ մի մէջ կը բերէ, ու տե-
սական դասը գործնականաւ ըմբռն-
նել կու տայ։ Ա՛ռիւն այրելէն յառաջ
եկած միւս զանազան գործքերն ալ
ասոր պէս են. ածխային թթուն,
ածուխը, յետոյ բուսական ածու-
խէն գոյացած կազը ամենքն ալ կար-
գաւ քննութեան կ՛առնուին Ա՛ռի
պաֆոլիեան հեղինակէն, որոյ գիրքը
քիմիականութե՛ առաջին սկզբունք-
ներուն պայծառ ու ճիշտ կերպով
խօսուած համառօտութիւնն է։

— Ո՛ղիկի պատուաստին համար
մօտերս գիտնոց ժողովքին մէջ կրկին
խնդիր ծագեցաւ. և թէպէտ եւ բը-
ժիշկներէն ոմանք պատուաստին պահ-
պանողական զօրութիւնը չեն ընդու-
նիր, այսու ամենայնիւ մեծագոյն մա-
սը անոր վրկարար արդիւնքը ճանչ-
նալով կ՛ապսպրեն որ այս նախազգու-
շական դարմանը զանց չառնուի ե-
րբեք։ Պատուաստի թարախին ուժը
(որ կովուց ստինքներուն վերայէն
կ՛առնուի սովորաբար), եօթէն մին-
չեւ տասը տարի կը տեւէ. յետ այ-
նորիկ պէտք է կրկնել զայն, թէ մեծ
մարդոց և թէ տղայոց վերայ։ Տղայ
մի պատուաստուելէն յետոյ չատ ան-
գամ կ՛ըլլայ որ վերայի թարախը
կ՛առնուն ուրիշի մը հաղորդելու
համար. ասիկայ խիստ վնասակար է,
և քիչ անգամ կը պատահի որ տղուն
առողջութիւնը ապահով մնայ, ինչ-
պէս մօտերս հանդիպած ցաւալի
դէպքերը փորձիւ կը հաստատեն։
Ա՛յսն որոյ աւելի՛ աղեկ է թարախը
միշտ կովերէն հանել քան թէ պատ-
ուաստեալ տղայոցմէ։ Այս պատճա-
ռաւ Լիւրսիէյ Լերեւելի քաղաքաց
մէջ յատուկ դռմեր կը հաստատեն,
առ պատրաստի միշտ կովեր ունենա-
լու համար։

— Փարիզու Կրանդ—Օրիան ըս-
ուած ժողովարանի մէկ խորհրդակ-
ցութեան մի մէջ մարդոյս առողջու-
թեան վերայ խնդիր բացուելով, տօք-
թօր Ա՛նթանիէ ճառ մի յօրինած է,
Ա՛ղբանո՛ւիւ՛ն՝ նպաստակ և օգուտ նորա
անուանուլ։

Ա՛ռենախօս բժիշկը մարդոյս ա-
ռողջութեանը վերայ խօսելով՝ տղուն
որրանէն սկսելով կ՛իմացնէ ծնողաց,
թէ ո՛րքան վնասակար է խանձարու-
րով զոզային փաթութելը, որով այն
մատղաշ արարածին բոլոր շարժմունք-
ները կ՛արգելուին, կը սկսի մռայլ ու
ճրաւալ, հասակին աճումը կը խափա-
նի, և չզօրանայր այն նեղ փաթութ-
ներուն մէջ բանտարկուած մնալով։
Տես հիմայ ասոր աղետալի հետե-
ւանքները։ Ա՛նկիկը կու լայ, մայրը
կարծէ թէ անօթի է, և անոր ճիչե-
րը դադրեցնելու համար կաթ կու
տայ. անոր վերայ պահ մի ձայնը կը
դադրեցընէ, ու յետոյ նորէն կը
սկսի, վասն զի լացը անօթութենէն
չէր, այլ իւր բանտարկուած անդամ-
ները շարժելու համար զգացած հար-
կաւորութենէն։ Ուրիշ անպատեհու-
թիւն մի ալ այս է, որ տղան լացին
պատճառաւ իրարու վերայ կաթ ու-
տելովը ստամոքսը առջի կերած կա-
թին անմարսողութենէն կ՛աւրուի
գէշ կ՛ըլլայ, և մայրն ալ կը ցաւի կը
նեղի թէ կաթը առատ ըլլալով ին-
չո՞ւ համար տղան չկշտանար ու սը-
նունդ չառնէր։

Պ. Ա՛նթանիէ հակառակ կը ցու-
ցընէ զինքը Թան (սուփա) ու պաք-
սիմատ կերցընելու սովորութեան,
զոր պէտք չէ կերցընել կ՛ըսէ մինչեւ
որ տղան ութ կամ տասն ամսուան
ըլլայ, ապա թէ ոչ թանձրամարմին

և պարարտամիս կ'ըլլայ, և անհան գիտ կեանք կ'ունենայ։

Տասը տարեկան որ եղաւ, կ'ըսկսի բոլորովին տարբեր էուԹիւն մի ստանալ. մանկուԹեան դրախտը անցաւ. ոմանք՝ ԹէՀ որ հարուստ եւ բարեվիճակ մարդոց զաւակ են, դըպրոց կ'երԹան. իսկ ԹէՀ որ աղքատ, կամ գործարանի մի մէջ պիտի դրուին, կամ արհեստաւորի մի քով, և կամ ծնողաց հետ մուրալու պիտի ելլեն, անոնց կենաց ԹշուառուԹեան նը հաղորդ ըլլալով։ Ինչ ըստ իմ, կ'ըսէ Պ. ՍանԹանիէ, ԹէՀ հարստաց և ԹէՀ աղքատաց զաւակութիքը միօրինակ դժբաղդ են։ Աղջիկները դպրոց մանելով իրենց իմացականուԹիւնն է որ կը մշակուի, և ուղեղնին ծանրապէս բեռնաւորուելով կը չարչարի, երբ մարմնոյ կրԹուԹիւնն ու մարզը զանց կ'առնուի։ Աղջիկները գործական արհեստին տակ կորանալով, մարմինին այն դրուԹեան մէջ կը մնայ, անդամներնէն մէկ քանին չափազանց կրԹուԹեան մէջ իսկ միւս մնացածները բոլորովին անգործածելի ու դանդաղ կը մնան. մէկ խօսքով չաւերնին ապեղ կերպարանք մի կը ստանան, և ոմանք ալ կը մեռնին։

Ինչ ԹէՀ մեր ընԹերցուհի տիկնայք և պճնասէր օրիորդք Պ. ՍանԹանիէի ճառին այն յօդուածը աչքէ անցընելու ըլլան, որ կանանց հագուստին ու կապուտաին վերայ կը խօսի, պիտի զարմանան իրենց միամուԹեան վրայ՝ որով կը հետևին եւրոպացի կանանց զարգասիրուԹեանը։ Թող ներուի մեզ ալ համառօտ տեսուԹիւն մի ընելու սոյն կտորիս վերայ ի գիտուԹիւն մերազնեայ տիկնաց և օրիորդաց։ Ըրդեօք կը հաւատան նոքա որ իրենց հագած տիկնաձեւ շրջազգեստը, զոր ըստ արդի նորաձեւուԹեան էրիվոլին կ'անուանեն եւ րոպացիք, պողպատէ շինուած գործիք մի ըլլալուն համար, կը հաւատան արդեօք որ էրիվոլիններըը առողջաբանուԹեան օրինաց դէմ հնարուած են։ Ւյն այն ոտքերը որոնք մարդկային բնական դիրքն ու հասակը մեզ տեղացրնելէն ի զատ սիրտն ու Թոքը այնպէս կը սեղմեն, որ չեն Թողուր կենսական ամենակարեւոր գործարանաց իրենց պաշտօնը կատարեն։ Պ. ՍանԹանիէ աղէկ գիտնալով որ կանանց հագուստին ու կապուտաին վերայ այս կերպ խօսելովը նախատինք պիտի լսէ ու գէշ հոգի պիտի ըլլայ, բայց մարդկուԹեան և անոր երջանկուԹեան վերայ ունեցած սէրն յաղԹուելով, և ընդդէմ նորաձեւուԹեան ոգւոյն՝ բանադատուԹեան առնելով ամէն մէկ կտորը, առանց զանց ընելու իմաստասիրական տեսուԹիւնը, իւր ճառը աւարտելու մօտ աչք մի կ'արձակէ անուշահոտ իւղեր (փօմատ) ծախողի մը խանուԹին վերայ. ու կը բացատրէ ԹէՀ անոնք՝ ինչ որ ալ ըլլան, ԹէՀ իւղ, ԹէՀ փոշի, եւ ԹէՀ ջուր, մարքան վտանգաւոր են և վնասակար մարդոյն առողջուԹեանը, որոնք արտաքուստ վարկենական գեղեցկուԹիւն շնորհելով՝ ի ներքուստ չարաչար կը Թունաւորեն, և երիտասարդուԹեան հասակը անժամանակ կը գահավիժեն ահռելի ծերուԹեան մի մէջ։ Ինչը այս բաղադրուԹեանց մէջ, կ'ըսէ Պ. ՍանԹանիէ, սաստիկ ներգործիչ Թոյներ կը մտնեն, ինչ պէս զաւիկ (1), կապար (2), սնդիկ (3), և ուրիշ շատ նիւԹեր որոնք հակառակ են առողջուԹեան։ Այս ըսած-

(1) Զաւիկ ղըրնգ։ (2) Կապար գուրշուն։
(3) Սնդիկ ճիվա։

ներուն հաստատուԹեանը համար օ-րինակ կը բերէ եղած դէպք մի, ո-րով Ֆըռէ-ր պը պիռո-ին այսինքն ձեր-մակ անգոյրին (1) ուներցած ղօրու-Թիւնը կ'իմացընէ։ Ա՛լեքսերթ բժիշ-կը իւր մէկ հիւանդին կը պատուիրէ տաք ջուր (2) մանելու, որոյ մէջ դրուե-լիք դեղերը ինքը կը կարգադրէ։ Հի-ւանդը որ կին մի էր, բժշկին պատ-ուէրը բառ առ բառ ի գործ կը դնէ. բայց ջրին մէջ մանելուն՝ իւր մար-մինը որ ձերմակ գոյն ուներ, անմի-ջապէս կը դեղնի, եռքը կը թխանայ, վերջապէս ածուխի նման կը սեւնայ. զայն տեսնելով սիրտը կը խաղայ և իս-կոյն բժշկին եռեւէն մարդ կը խրկէ բերել կու տայ։ Կը հարցընէ իրեն բժիշկը, Թէ անգոյր կը գործածէիր։ — Մինչեւ երեսիս վերայ, և այն ալ խիստ քիչ, կը պատասխանէ հիւան-դը։ — Թէ որ միայն երեսիդ վերայ ըլլար, կ'ըսէ բժիշկը, երեսդ միայն պիտի սեւնար, և անոր դեղը դիւ-րին կ'ըլլար՝ քան Թէ հիմայ։ Բժիշկը Թէեւ կրնար խեղճ կնկանը մարմնոյն իւր առջի գոյնը տալ, բայց ի պա-տիժ անոր անզգուշուԹեանը առանց դարմանի կը Թողու կ'երթայ։

— Սորպոնի ուսումնական ցայգա-հանդէսներուն մէկուն մէջ Պ. Պերդ-բան ձառ մի խօսեցաւ՝ նիւԹ առնե-լով իրեն Ա՛լեքսի Կլերոն (3) և երկրիս չա-փը։ Կլերոն՝ տ'Ա՛լանպէրի ժամանա-կակից և գիտուԹեանց մէջ անոր աջ խոյանն եղած էր։ Իւր տան եւ ինն եղբարց մէջ անդրանիկն էր. հօրը քով՝ որ մաԹեմաԹիքական ուսմանց դասատու էր, սորվեցաւ հասարակ ընԹերցումը։ Տասնամեայ հասակին մէջ գիտուԹեանց ձեմարանին ձառ մի ներկայացուց Լոնայէ հպարտա-նուն, զոր գիտնոյ ժողովը հաւ-նած էր։ Տասն եւ վեց տարիքը հաս-նելուն երկրորդ գրուածք մի տուաւ կրկնակոր գիծերու վերայ. բայց չա-փազանց աշխատուԹեամբը եւ իւր լմացական կարողուԹեանց չարունակ գործածուԹեամբը ըղեղի տենդով ծանրապէս հիւանդացաւ։ Տասն եւ ուԹ տարեկան հասակին մէջ Ա՛կա-տեմիան մտաւ. նոյն ժամանակները շատ նորահասակ պատանիներ ան-դամ եղած էին հոն, ինչպէս ակնար-կուԹիւն կ'ընէ Պ. Պերդբան. և տ'Ա՛-լանպէր ալ քսանեւհինգ տարեկան մտած է. մարդոյս տաղանդը արժէք մի է, տարիքը լեցուելուն երբէք չըս-պասէր։ Կլերոյի կենաց գլխաւոր կէտն իւր դէպ ի Լաբոնիա ըրած ճամբոր-դուԹիւնն եղաւ, ուր Լուի ԺԵ-ի կողմէն խրկուեցաւ ուղեկցուԹեամբ Մօբերտուի։ Ասոնց նպատակն էր ստուգել երկրիս բեւեռակողմերուն տափակուԹիւնը. նոյն միջոցին ու-րիշ երկու գիտնականք ալ Պոնտամին եւ Պուկէօ դէպ ի հարաւակողմը խրկուեցան երկրիս հասարակածին կողման ուռեցած ըլլալը ստուգելու։

Ա՛մբորդուԹիւնը խիստ նեղու-Թեամբ եղաւ. առջիններուն՝ կե-րակրոյ և ցրտուԹեան պատճառաւ, միւսներուն ճնշաոակար մեղուներուն և ուրիշ անհանգստուԹեանց երե-սէն։ Ա՛յսու ամենայնիւ Լաբոնիայի մէջ միջօրէական չափը ստուգեցին, և սա իմացան որ բեւեռակողմի աս-տիճանին երկայնուԹիւնը աւելի տա-բածուն էր 506 գրկաչափ, զոր Պոն-տամին ու Պուկէօ հաստատեցին իմացընելով իրենց գիւտը, որ էր հասարակածին կողմը աստիճանին 500 գրկաչափ կարճ ըլլալը։ Բեւեռային երկարագոյն գիշերներուն մէջ ժա-մանակ ուներցաւ Կլերոյ երկրիս ձե-

(1) Անգոյր պուդրէն։ (2) Bain de Barège.
(3) Alexis Clairaut.

ւոյն վերայօք ալ խորհիլ և այս ա-
ռարկայս հարեւանցի ձեռք չառաւ
քննելու, որու վերայ գրուածք մի
Թողուց այն աստիճանի կարեւոր ու
հատընտիր գործ մի, զոր մինչեւ հի-
մայ հարիւր տարիէն աւելի կայ,
մկկը չէ կրցած գերազանցել: Այս
աշխատութենէն ետքը լուսնի վերայ
տեսական գիտութիւն մի հրատարա-
կեց, և օրքան որ ըրած հաշիւները՝
իւր ուղղել ուզած ձգողական զօրու-
Թեան օրինաց հակասական են, սա-
կայն Պլեֆֆոնի դէմ երկար վիճա-
բանութիւն մի բացաւ, որուն մէջ
Թէև Թերութիւն ունի, սակայն ա-
ռաւելութիւն և յաղԹութիւն ալ
ձեռք բերաւ: Իւր այս տեսական
գիտութեանցը վերայ ժամանակէ ետ-
քը կրկին գրուածք մի հանելով՝ իւր
խաբուած ըլլալը յայտնեց, և աստ-
ղի օրինակ տուաւ համեստ խոնարհու-
Թեան որ գերագոյն հանճարներու
վերայ միայն կը տեսնուի:

Ւոյն միջոցներն էր Անգլիա 500
հազար ֆրանք խոստացաւ նուիրել
այն մարդուն որ կարենայ ծովուն ե-
րեսը մկկ տեղւոյ մի կէս վայրկեան
մօտ եղած միջոցին երկայնութիւնն
ու լայնութիւնը գտնելու գործնա-
կան միջոցը յայտնել: Վերերոյ աստե-
ղաբաշխական տախտակները ներկայա-
ցուց, լուսնին տակ ծածկուած աստ-
ղերն և առհասարակ երկնային օդե-
րեւոյթները նշանակելով պատուա-
կան ժամացոյցի պէս: Ւայց այս
տախտակները բաւական ճշդութիւն
հաշուի առնուած չէին, և իւր ցու-
ցուցած միջոցները նաւավարներու
գործածութեանը աղեկ չդալով, չը
կրցաւ խոստացուած վարձքը ըն-
դունելու: Վերջապէս Ալէքսի Վերե-
րոյ Հալլէյի գիտաւորին վերայ աշ
խատասիրութիւն մի յօրինեց, գիտա-
ւորին չրջանը որոշեց, 1758 ապրիլ
1 ին պիտի երեւնայ ըսաւ՝ հաշիւ-
ներուն մէջ ըրած զանցառութեամբը
ամսօրեայ լայնութիւն տալով, վասն
որոյ մկկ ամիս առաջ, այսինքն մար-
տի 13 ին երեւցաւ Հալլէյի գիտա-
ւորը: Վերերոյ այս իւր պատուոյն մէջ
ուրիշ ախոյանի մի հանդիպելով՝ չա-
րաչար վիրաւորեցաւ եղած անիրա-
ւութեան վերայ: Մեռաւ 1765 ին:
Իւր հայրը գեռ ողջ էր զուրկ բոլոր
մանչ զաւկներէն, որուն մկկ աղ-
ջիկը միայն մնացեր էր, և Հ. ուի ֆե-
սարեկան Թուշակ մի կապեց անոր:

ԱՕԳՈՍՏԻՆ

Արժանապատիւ Օ. աքարիա վար-
դապետը, որ երկու տարիէն ի վեր
Հ. ԹաԹաքիա կը գտնուէր տեսչու-
Թեան պաշտօնիւ ի կողմանէ Ս. ԱԹոռոյս
խրկուելով, մեծի պահոց մէջ եկաւ
ի Ռք քաղաքս. որոյ հետ ընկերացած
էր նաեւ ի պատճառս ուխտի Հ. Ա-
Թաքիոյ երեւելիներէն մեծապատիւ
Պատուածատուր աղան Յակոբեան
իւր ընտանեօքը հանդերձ: Յիշեալ
արժանապատիւ վարդապետը Հ. Ա-
Թաքիոյ հայաբնակ գիւղերը այցե-
լութեան պտըտած ժամանակ, տես-
նելով որ գիւղացւոց մէջ քանի մի
տուն բողոքականութեան դարձած
են, յորդորելով զանոնք աղդու խոս-
քերով յաջողեր է մի քանին կրկին ի
ծոց սուրբ եկեղեցւոյն Հայաստան-
եայց դարձընելու, և անոնց զաւա-
կունքը մկրտելու, որոնք երեք չորս
տարիէն ի վեր անկնունք կը մնային:
Ցոյս ունկիմք որ յիշեալ բարեչան
սուրբը Հայրը կրկին ետ դառնալուն
և կամ իւրեան յաջորդը՝ ո՛ր ոք և է,
պիտի աշխատի մնացեալ մկկ քանի

անձինքն ալ սերով ընդունելու իծոց ազգային ուղղափառ եկեղեցւոյս ուսկէ հեռացեալ են դժբաղդութեամբ: Ուրժանապատիւ Օ. աքարիա վարդապետը յիշեալ գիւղերուն ազգայնոց ցաւալի վիճակին վերայ կարեւոր տեղեկութիւններ հաղորդած է մեզ, զորոնք յաջորդ մեկ թուով ամաոդրոյս մէջ պիտի հրատարակեմք:

— Յայտնի է որ սուրբ քաղաքիս քրիստոնէից գերեզմանատունը առանց պարսպի ըլլալով՝ գերեզմանաքարերը ապահովութեան մէջ չեն: Ընդհակառակը Աւստրիոյ հիւպատոսի հնոջ պօրփիւրեայ պատուական կնքոյը չարագործ մարդոց ձեռաքը խոտոտակուելով, անմիջապէս Ր. Դրան բողոքուեր, և հեռագրով հրաման եկած էր լատինաց վանքին, որ պարսպեն գերեզմանատունը եթէ վէճի տեղ մի չունի ուրիշի հետ: Այն հրամանիս վերայ լատինք սկսան իսկոյն պատել իրենց գերեզմանատունը բոլորովին հակառակ ճամբայ մի բռնելով տէրութեան հրամանին: Յիշեալ գերեզմանոցը Հայոց Քնարանին մէջն ըլլալով, միայն հիւսիսային կողմը ճամբու վերայ է. և փոխանակ ըստ օրինի իրաւանց՝ այն կողմէն դուռ բանալու, հարաւային և արեւմտեան կողմէն դուռ մտցուցին որ Հայոց Քնարանին մէջ կը բացուի: Սրբազան Պատրիարքը ասոր պատճառը կեմ բողոքեց տեղւոյս կառավարչին, որ գաւառին և ժողովոյ անդամոց հետ գալով և տեսնելով որ օրինաց դէմ է երկու դռներն ալ, հրամայեց որմնադրաց որ գադրեցընեն շինութիւնը, որ Հայոց իրաւանցը կը դպչի, և հիւսիսային կողմէն հաստարակ ճանապարհին վերայ բանան դուռ մի: Այսու ամենայնիւ ոչ ոք մտիկ ընելով փաշային հրամանին, որ Օսմանեան հրդեհ տերութեան պատկերը կը համարի, չարունակեցին իրենց գործը, մինչեւ լացաւ երկու դռները հանդերձ փեղկերովին ու բանալիքով: Եթէ Հայոց իրաւունքը տեղը գալու ջըլլայ, հարկ պիտի ըլլայ Քնարանին կէսը զոհուիլ լատինաց բռնութեանը: Փաշան թէպէտեւ մինչեւ ցայսօր չուղեր ճանչնալ այս երկու ընդդէմ տերութեան հրամանին բացուած դռները, և Սրբազան Պատրիարքն ալ իւր բողոքները օր աւուր կը կրկնէ, բայց փաշային մէկ բանիւ ըրած հրամանը գործադրութիւն չգտնելով չեմք գիտեր թէ ուժմ թէ կամաց պակասութենէ է: Այսչափ միայն ի տեղեկութիւն օրհնեալ ազգին կը ծանուցանեմք յայտնի տեսնելով բռնութիւն մի որ հակառակ բարձրագոյն կամաց Տէրութեան կը կատարուի ի վնաս սեփականութեան իրաւանց ազգիս: Լատինաց յիշեալ գերեզմանատունը Հայոց ձեռքէ խլեւած է 1777 ին, ի ժամանակս Դամասկոսի կուսակալ Հաթըմ օղլու Մէհմէտ փաշայի:

— Մեծի պահոց միջոցին Յառաջաւորաց Դպրոցին համար հինգ աշակերտացու պատանիք եւս հասան ի Ս. Ընթաց. մին Բերքայէն՝ Գէորգ անուն, երկրորդը Օմիւռնիոյ վիճակի Նազլը գիւղաքաղաքէն՝ Օհան անուն, երրորդը Պրուսայէն՝ Գրիգորիս Յովհաննէսեան, չորրորդը Լադաքիայէն՝ Սիմոն մահտեսի Ստեփանոսեան որ իւր հօրը հետ եկած է, և հինգերորդը Տիգրանակերտէն՝ Տ. Մատթէոս Կարապետ անուն: Ասոնց մէջ երեքը համեմատ գտնուելով պայմանաց և բժշկին վկայութեամբն ալ մարմնոյ առողջութեան մասին անարատ ըլլալով, ընդունուեցան յաշակերտութիւն: Իսկ

միւս երկուքին մէկը՝ պրուսացին ինքնին հրաժարելով եւ պայմանաց տրամադրութեանն ալ ներհակ ըլլալով՝ ետ ձամբուեցաւ։ Նմանապէս Նաղիլլցին հակառակ պայմանաց հայերէն խօսիլ գրել ու հասարակ ընթերցում չգիտնալուն, հասակաւ ալ քսանը անցած ըլլալուն, մանաւանդ թէ աչ աչքին մէջ բիծ մի ունենալուն ետ խրկուեցաւ։ Ինսաւսիկ ասոր համար բժշկին տուած վկայագրին օրինակը։

Թիւ 9.

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Սրբոյ Ղազարոս Յառանգաւորաց Դպրոցը աշակերտելու համար Օմիւռնիոյ վարչութեան կողմէն ընտրուած եւ ղրկուած Նաղիլլցի Օհան անուն երիտասարդը, Ձեր բարձր Սրբազնութեան եւ Ս. Ղազարոս կանոնին համեմատ ըստ բժշկականութեան քննեցի, որուն կազմուածքը առողջ եւ ժառանգական ախտ մը չունենալուն համար կը վկայեմ. բայց աչ աչքին վրայի ունեցած բիծը (taies de la cornée), որ մէկ ու կէս տարիէն ի վեր ունի եղեր ըստ իւր վկայութեան, ներկայիս պարտանձին կը համարիմ ծանուցանել Ձեր Սրբազնութեան որ ըստ հրահանգին՝ այս աշակերտացուն չհրնար ընդունուիլ ի վարժարանն։

1866, Մարտ 15. Գ. ԱՒԵՏԻՍ
Ի Սմիւռնի Երուսաղէմ։ Ս. ՏԷՊԷՃԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Սուրբ Ծատկի տօնակատարութեան օրերը մօտենալուն եւրոպացի այցելուաց թիւը աւելցաւ։ Որոնց մէջ կան ամեն ազգէ նշանաւոր և հարուստ մարդիկ թէ բողոքականք եւ թէ հռոմէականք։ Յականէ յիշատակուողներն են Ընթ. Էօլէնպուրկեռնի, պաշտօնեայ առաջին զօրաբաժնի արքունի Թիւնապահայ Բրուսիոյ տէրութեան, և նորին ուղեկից Պարոն տը Կէռ նոյնպէս պաշտօնեայ առաջին զօրաբաժնի արքունի Թիւնապահայ Ռուսիոյ տէրութեան։ Ասոնք ընկերութեամբ իրենց Թարգմանին և Յոպպէի մէջ Բրուսիոյ տէրութեան գործակատար Սրապիան Յ. Մուրատեան հայկազուն լեզուագէտ պատանւոյն՝ եկան ի Ս. Ղազարոս յայցելութիւն Սրբազան պատրիարքին, որոնք արժանաւոր կերպիւ ընդունուեցան։

Մարտի 13 ին հասաւ ի Ս. քաղաքս Աւեզլի պարանոցի շինութեան աջին տիրեքթօր Պ. Լէսէփս հնամբաւաւոր գաղղիացին. որ պաշտօնական կերպիւ ընդունուեցաւ կառավարութեան կողմէն։ Նոյն օրը հասաւ դարձեալ Ընկերի տէրութեան նոր հիւպատոսը։

15 ին եկաւ մեծահարուստ և մեծանուն սեղանաւորը Մոնթեֆիօրէ, որոյ դիմաց անկանոն զօրաց մէկ մասի խրկուած էր ի պատիւ. և հրեից բազմութիւնը մանաւանդ աղքատաց խումբը գրեթէ ովսաննայիւք ընկալան զինքը. որ թէպէտ եւ քաղքէն դուրս վրանի տակ բնակեցաւ, այսու ամենայնիւ հասնելէն յետոյ անմիջապէս նոյն ձիաւոր զօրաց և ժողովրդոց բազմութեամբ ի սինակոկան գընաց։ Մեծահամբաւ Ռոշիլտի ազգական սոյն ծերունի ուխտաւորը, որոյ մարդասիրական և աղքատասիրական մեծագործ յիշատակները շատ են Ս. քաղքիս մէջ, կ'ըսուի թէ հոս պիտի մնայ իւր ծերութեան հասակին մնացեալ մասը անցընելու։

—Ուրախ եմք աւետելու մեր բարեպաշտ ընթերցողաց և բոլոր հաւատարկութեան ներկայ հազար ուրախարիւբ վաթսուն և վեցերորդ տարեդարձը Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի տիեզերակեցոյց սուրբ յարութեան, ամենայն խաղաղութեամբ կատարելնուս, շնորհիւ աչալուրջ հսկողութեան տեղւոյս զօրաց հրամանատար վեհ. Ի. իվա Փաշային։

Սուրբ Օ՛ծակի հետեւեալ աւուր պատարագին և Թափօրին հանդէսը մեծ և սովորականէն աւելի փառաւորութեամբ կատարեցաւ, ուր ներկայ էին քաղաքիս կառավարիչը, Ռուսիոյ, Աւստրիոյ, Մեքսիկայի և Ընթէնքի հիւպատոսները, քանի մի երեւելի աւստրիացի կոմսեր ու պարոնուհի մի և ուրիշ անհամար օտարականներ. որոնք տեսնելով սուրբ քաղաքիս մէջ հոգեւոր հանդէսի մի ամենայն բարեկարգութեամբ և մեծ շքեղութեամբ կատարուիլը, ուր ընդհանրապէս այսպիսի հանդէսները համատարութեք եղած սրբազան տեղերուն մէջ շատ անգամ խռովութեք, կռուով և անկարգութեամբ կը վերջանան. իսկ սուրբ Յարութեան ազգային Մայր եկեղեցւոյ մէջն այս աւուր սրտաշարժ և հոգեւոր հանդէսի մի փառաւորութիւնը ի խոր տպաւորելով իրենց մտացն ու սրտին մէջ, զինի պատարագին ուղղակի ի Պատրիարքարանն երթալով՝ ուրախութեամբ յայտնեցին հայկական եկեղեցւոյ գեղեցիկ արարողութիւններն ու շքեղութիւնը՝ Սրբազան Պատրիարք Հօր, որ էր ժամարար միանգամայն և Թափօրատեր։ Նորին մեծապատիւ Սրբազնութեան առաջարկութեամբը բարեհաճեցաւ վեհ. մափսլ Ռեշիտը և մեծապատիւ հիւպատոսք հանդերձ օտարական այցելուօք սեղանակից ըլլալ Միաբանութեան ի հասարակաց ճաշատունը։ Սրբազան Պատրիարքը ըստ պահանջման պարագային Սուլթան Պատ իւլ Ազիզ վեհափառ կայսեր կենացը բաժակ մի առաջարկեց, յետոյ փոխադարձ բաժակ մի վեհ. մափսլ Ռեշիտ իր առաջարկեց պարպել Սրբազան Պատրիարք Հօր և բոլոր ազգիս կենացը համար, երկրորդ բաժակ մի եւս տրուեցաւ թէ Նորին վեհութեան և թէ մեծապատիւ հիւպատոսաց կենացը համար։ Միաբանութեան սեղանոյն պարզութիւնը եւ չափաւորութիւնը մեծ գովութեան պատճառ տուաւ մեծարու այցելուաց, որոնք քաղցր յիշատակութիւն մի պիտի պահեն իրենց մտացը մէջ առ սուրբ Յարութ, որոյ փառաւորութիւնը ու համբաւը ընդհանուր ազգիս կը վերաբերի անշուշտ։

—Նոյն օրը վախճանեցաւ սուրբ Յարութեան միաբաններէն ծերունազարդ Կոմիտաս Թադէոս վարդապետը ի հասակի իբր ինսունէն և հինգ ամաց։ Յիշեալ վարդապետը, որ իբր անոյշ բնաւորութեամբն և անբիծ վարքովը բոլոր միաբանութեան սիրելի եղած էր, յիսուն տարիէն աւելի միաբան լինելով՝ վաստակաւոր կը համարի սուրբ Յարութ, և բանական յիշատակները եւս թողուցած է։

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Օ՛ինչ օգուտ իցէ առաքինանալ արտաքոյ, եթէ չարաչար իցեն կեանք առանին։

Իշխանաւորաց բարձրագահ՝ են օրէնք, և ժողովրդեան՝ իշխանաւորք։

ԱՆՈՒԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Ամն. Տ. Տ. ԵՍԱՑԻ Սրբազան Պատրիարք (3 օրի.)։
Գեր. Խաչակ Արքեպիսկոպոս (2 օրի.)։
„ Կարապետ Արքեպիսկոպոս։
„ Յակոբ Արքեպիսկոպոս (2 օրի)։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Արժ. Յակոբ Ծ. վարդապետ։
Աշճեան մահտեսի Յակոբ աղա։
Գրիգորեան Սարգիս էֆէնտի։
Գ. Նուսուխեան Աղէքսանդր աղա։
Ջաքեան Կարապետ աղա։
Խալաեան մահտեսի Յակոբ աղա։
Հայաճեան Մկրտիչ աղա։
Հավաճա Ճիվանի։
Ճիվահիրճեան Գառնիկ աղա։
Նիկողայոսեան Յարութիւն էֆէնտի։
Պօղոս աղա Բէլաքօֆ։
Սեղբոսեան Գաբրիէլ աղա։
Տէր Գասպարեան Ղազարոս աղա։

ԱՏԱԲԱԶԱՐ

Եղիազեան Մինասական աղա։

ԵԳԻՊՏՈՍ

Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս։

ԵՐԶՆԿԱՑ

Փիւրա օղլուեան մահտեսի Գրիգոր աղա։

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Վանեցւոյ Իղնէթ փաշայ հաւատարիչ քաղաքիս։
Արժանաւոր Վ. Ըմմանէս վարդապետ։
„ Յարութիւն վարդապետ։
„ Պետրոս վարդապետ։
„ Յովհաննէս վարդապետ։
„ Եղիշէ վարդապետ։
„ Խաչատուր վարդապետ։
„ Մարտիրոս վարդապետ (2 օրի)։
„ Աթանաս վարդապետ։
„ Ղեւոնդ վարդապետ։
„ Տիմոթէոս վարդապետ։
„ Առաւածատուր վարդապետ։
„ Փիլիպոս վարդապետ։
„ Բառնաբաս վարդապետ։
„ Հրաչեայս վարդապետ։
„ Խոսէն վարդապետ։
Յակոբ քահանայ Երզնկացի։
Սարուաճ Մարտիրոս Մալաթացի։
„ Գրիգոր Երզնկացի։
„ Պօղոս Վանեցի։
„ Գրիգոր Արաբկիրցի։
„ Խաչատուր Մալաթիացի։
Ռէտաքիլիւ Բարսեղ Ա. Յազմաճեան։
„ Բարսեղ Բազէճեցի։
„ Մանասէ Թրակացի։
Ամերիկայի Հիւպատոս, Mr. Victor Beaubocher, Consul d'Amérique.
Անգղլոյ Հիւպ. Mr. N. Moore, Consul d'Angleterre.
Աւստրիոյ Հիւպ. Mr. Walcher de Molthiem, Consul d' Autriche.
Գաղղլոյ ընդհանուր Հիւպ. Mr. E. de Barère, Consul Général de France.
Գաղղլոյ Հիւպատոսարանի քարտուղար, Mr. F. Rougon, Chancelier du Consulat de France.
Խաչատուրեան Յակոբ աղա։
Մուրթաֆեան Կարապետ աղա։
Ս. Մուրատեան Բասքալ Յակոբ աղա (2 օրի.)։
Ս. Մուրատեան Ղազարոս աղա։
Սպանիոյ Հիւպ. Mr. Louis Dodici, Consul d'Espagne.

ԵՐԵՒԱՆ

Քերիմով մահտեսի Եղիազար աղա։

ԿԱՐԻՆ

Գեր. Յարութիւն Արքեպիսկոպոս։
Կնճիկեճեան Սարգիս էֆէնտի։
Մուշեղեան Յարութիւն էֆէնտի։

ԿԵՍԱՐԻԱ

Թանգպարանն Կեսարիոյ։
Թանգպարանն Կեռմերու։

ԿԻՊՐՈՍ

Սրբ. Ղուկաս վարդապետ։
Արժ. Պօղոս վարդապետ։
Դպրոցն Կիպրոսի։
Թարխրոսեան Յակոբ աղա։
Մելիքեան Մելիքճան աղա։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ամն. Տ. Տ. ՊՕՂՈՍ Սրբազան Պատրիարք (2 օրի.)։
Գեր. Աբրահամ Արքեպիսկոպոս Շապանդարահիսարու։
„ Անդրէաս Եպիսկոպոս։
„ Աբիսաքէս Եպիսկոպոս։
„ Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու (2 օրի)։
„ Գրիգոր Արքեպիսկոպոս Ապարկիրու։
„ Յովհաննէս Արքեպիսկոպոս Պանորմոյու։
„ Ղեւոնդ Եպիսկոպոս Վարժապետեան։
„ Նիկողոս Եպիսկոպոս Պօլսեցի։
Արժ. Ալէքսան վարդապետ Ճէնճեան։
„ Գաբրիէլ վարդապետ Թոմասեան։
„ Գրիգոր վարդապետ Աբարդեան։
„ Խոսէն վարդապետ Գալֆայեան։
„ Կարապետ վարդապետ Ֆախ. Պոստրիքեան։
“ Յակոբ վարդապետ Քարակեօմիւրկի։
„ Յովհաննէս վարդապետ Սէմեան։
„ Պետրոս վարդապետ Պրուսայու։
Տ. Գրիգոր քահանայ Ադէմեան։
Տ. Գրիգոր քահանայ Պեշիկթաշլու։
Տ. Եղիշէ քահանայ Մայր Եկեղեցւոյ։
Տ. Մարուքէ քահանայ Քարակեօմիւրկի։
Տ. Սարգիս քահանայ Մայր Եկեղեցւոյ։

Աղաթան Գրիգոր Հիճնաի ։
Աղաճանեան Սիրուիճ և Կարապետ աղայք ։
Ալեոն աղա Խամչիեի ։
Աղթիամեան Միքայել աղա ։
Բարսղամեան Յովսեփ աղա ։
Աթաբեկեան Սահիան Պէյ ։
Բարսեղեան Սահիան աղա ։
Գաբրիել աղա (մահտեսի) ։
Գաբրիելեան մահտեսի Սիրուիճ աղա ոսկերիչ ։
Գալուստեան մահտեսի Խաչատուր աղա ։
Գալուստեան Ղազար աղա ։
Գասպարեանց մահտեսի Գաբրիել աղա ։
Գասպարի աղա (մահտեսի) ոսկերիչ ։
Գասպեան Յարութիւն աղա ։
Գասպարեան Գէորգ աղա ։ (2 օրի ։)։
Գասպարեան Մանուկ աղա ։
Գասպարեան Յարութիւն աղա ։
Գասպարեան Նազարէթ և Հաճարտում աղայք (2 օր)
Գասպարեան մահտեսի Յակոբ աղա ։
Գուրգեան մահտեսի Յարութիւն աղա ։
Գուշպազլեան մահտեսի Յակոբ աղա ։
Կրիզոր աղա Թովմիկ ։
Կրիզորեան Սիմոնիկ աղա ։
Դպրապետաց ընկերութիւն Երիցու ։
Եաղճեան Գօզլու աղա ։
Եուսուֆեան Ահերան աղա ։
Ելամեան Գէորգ Պէյ ։ (3 օրի ։)։
Եօրտամեան Կարապետ աղա ։ (2 օրի ։)։
Ջարդարեան Գէորգ աղա ։
Ջարդարեան Կարապետ աղա ։
Էլմաեան Գեւորս աղա ։
Էնանեան Գեւորս աղա ։
Էսկեան Գէորգ աղա ։
Թադէոսեան Վրիհանէս աղա Ժամագործ ։
Թահմազուրեան Կարապետ աղա ։
Թիրեաքիեան Կարապետ աղա ։
Թիրեաքիեան Յարութիւն աղա ։
Թօդամլեան Սիմոն Հիճնաի ։
Թօխատցի մահտեսի Յակոբ աղա ։
Իշխատպաշեան Ասատուր աղա ։
Իշխեճեան մահտեսի Սիմոն աղա ։
Խաչիկեան Սահիան աղա ոսկերիչ ։
Խաչատուրեան Նիկողոս աղա ։
Խուսրեւեան Գէորգ աղա ։
Կիւլլենկ Աբել աղա ։
Կիւլլենկեան մահտեսի Կիւլլենկ աղա ։
Կիւմիւշեան Հաճիթաղում աղա ։
Կիւմիւշեան Յարութիւն աղա ։
Կիւմիւշկի մահտեսի Աբրահամ աղա ։
Կիւմիւշկի Հարրիել աղա ։
Կիւմիւշկի Գասպար աղա ։ (2 օրի ։)։
Կիւմիւշեան Գաբրիել աղա ։
Համամճեան Գասպար աղա ։
Համբոյ մահտեսի Աբրահամ աղա ։
Ղազարեան մահտեսի Խաչիկ աղա ։
Ղազարեան Փըլհասասուր աղա ։
Ղազիզպաշի մահտեսի Փերոզ աղա ։
Ճենապեան Ղազարոս աղա ։
Ճենապեան մահտեսի Գաբրիել աղա ոսկերիչ ։
Ճիվելեկեան Կարապետ աղա ։
Ճիվելեկեան Ղազարոս աղա ։
Ճիվելեկեան Յովհաննէս աղա ։
Մազլումեան Երիցմ աղա ։
Մազմանեան մահտեսի Աբգիխ Խաչիա ։
Մահտեսի Պետրոս աղա վանցի երէցփոխ ։ Աղճամապայ ։
Մանիկեան մահտեսի Մանուկ աղա ։ (2 օրի ։)։
Մանուելեան Յակոբիկ աղա ։
Մանուելեան Պօղոս աղա ։
Մանուկեան Յովհաննէս աղա ։
Մանուկեան Սենեքերիմ աղա ։
Մաքսուտեան Սիմոնիկ աղա ։ (2 օրի ։)։
Միխիթարեան Միսաքաթոլիկ ։
Միսկեան Ճիման աղա ։
Միսաքեան Խաչատուր աղա ։
Միսաքեան Վարդերէս աղա ։
Միքայելեան Սամուել աղա ։
Մոմճեան Տօքթօր ։
Մուրատեան Յակոբ Հիճնաի ։ (2 օրի ։)։
Մուսիկեան Յակոբ աղա ։
Մուրատեան Գէորգ աղա ։
Մուրատեան մահտեսի Փաղոյ աղա ։
Մոմիճեան մահտեսի Կարապետ աղա ։
Յակոբեան Գօզլու աղա ոսկերիչ ։
Յովհաննէս աղա ։
Յովհաննէսեան Հայրապետ աղա ։
Յովհաննէսեան Յակոբ և Բարսեղ աղայք ։
Յովսէփեան Կարապետ աղա ։
Նիկողոսեան Գեւորս աղա ։
Նազարեանց մահտեսի Գրիգոր աղա ։ (2 օրի ։)։
Նազարեանց Յակոբիկ աղա ։ (2 օրի ։)։
Նազարեանց Սիմոնիկ աղա ։ (2 օրի ։)։
Շահաւէտեանց ընկերութիւն Սկբտաիայ ։
Շամլեան մահտեսի Կարապետ աղա ։
Շամոանճեան Աւետիս աղա ։
Շխիեան Յովհաննէս աղա Ղազարպաղի ։
Ռշտունեան Պարտիրոս աղա Ժամագործ ։
Չայլաքեան Կարապետ աղա ։
Չէլեպեան Գրիգոր և Յովհաննէս աղայք ։
Չամճեան Սարգիս աղա ։
Չօլաղեան Մանուկ աղա ։
Չօպանեան Ղազարոս աղա ։
Պալեան Կարապետ Ամիրայ ։ (3 օրի ։)։
Պալեան Սարգիս Պէյ ։
Պալքըկեսրեան Աւետիկ աղա ։
Պապտիպանեան Աւետիս աղա ։
Պէզճեան Եղիա աղա ։
Պէզճեան Խոսրով պէյ ։
Պէզճեան Յահակ աղա ։
Պերպերեան Սարգիս աղա ։
Պեշկիրեան Միքայել աղա ։
Պօղոսեան մահտեսի Գէորգ աղա ։
Պօշտակեան Սարգիս աղա ։
Ռոբէն աղա դերձակ ։
Սաիրճեան Երմոդինէս ։

Սագաեան Ալէքսան աղա ։
Սահակեան մահտեսի Յարութիւն աղա ։
Սարրաֆեան Կարապետ աղա ։
Սերովբէ (մահտեսի) աղա ։
Սերովբէեան Երանիկ վարժուհի ։
Սերովբէեան Յարութիւն աղա ։
Սերվիչէն Էֆէնտի ։
Սէրքիզատէ մահտեսի Սահակ աղա ։
Սիմոնեան Յակոբ աղա ։
Սմբատեան Յարութիւն աղա ։
Սուլթանեան Նիկողոս աղա ։
Սուբհեան Յովհաննէս Էֆէնտի ։
Ստամբօլեան Կարապետ և Բարսեղ աղայք ։
Սուփհանեան մահտեսի Մկրտիչ աղա ։
Վարդանեան Աբրահամ աղա ։
Վարժապետեան Գրիգոր աղա ։
Տաւկաճեան Աբրահամ աղա ։
Տառեան Յ. Առաքել Սիտակ Էֆէնտի ։
Տառեան Պ. Առաքել Էֆէնտի ։
Տառեան Պ. Մկրտիչ Պէյ ։
Տառեան Յովհաննէս Պէյ ։
Տառեան Ղեւոնդ Էֆէնտի ։
Տառեան Պ. Մարգսալենք ։
Տառեան Պ. Ղուկէ ։
Տառեան Պ. Սիմոն Պէյ ։
Տէր Յովհաննէսեան Ղազարոս աղա ։
Տէր Վրթանէսեան մահտեսի Գրիգոր աղա ։
Տօնեվեան Գաղատացի Յակոբ աղա ։
Րիփեան Մկրտիչ Պէյ. (3 օրի.) ։
Փանոսեան Գէորգ աղա ։
Փախաղեան Գէորգ Ամիրայ. (2 օրի.) ։
Փեշտըմալճեան մահտեսի Մկրտչէ աղա ։
Փեշտըմալճեան մահտեսի Սահակ աղա ։
Քարտաշեան Մկրտչէ աղա սրմաքէշ ։
Քաշմեեան Առաքել աղա ։
Քեհեհճեան Ովսիկ Էֆէնտի ։
Քեշկեկեան Յովհաննէս աղա ։
Քըլաճեան Յարութիւն աղա ։
Քըչճեան Գէորգ աղա ։
Օհան աղա ։
Ֆէնէռճեան Յովակիմ աղա ։
Ֆէրուհ Բարսեղակ Պէյ ։
Փրենկեան Յակոբ Էֆէնտի ։

ՄԱԼԱԿԱՐԱ

Պիծակեան մահտեսի Յովհաննէս աղա ։

ՄԱՐԶՈՒԱՆ

Գեր. Գէորգ Աբքեպիսկոպոս ։

ՑՈՊՊԻ

Արժ. Երեմիա վարդապետ տեսուչ ։
Ս. Մարբաեան Սիմէօն աղա ։

ՊԵՐՈՒԹ

Արժ. Կիրակոս վարդապետ տեսուչ ։

ՏՐԱՊԻԶՈՆ

Արժ. Մեսրոպ Աբքեպիսկոպոս (2 օրի.) ։
Մեղաւորեան Սարգիս աղա ։

ՓԱՐԻԶ

Թիւրապեան Պետրոս աղա ։

ՅԱՆԿ

ԱՊՐԻԼ։

ԿՐՕՆԱԿԱՆ. — Մարդկային հոգւոյն գոյութիւնը և անմահ հոգւոյ թիւնը։ — Սադուկեցիք 49

— Անգլիական և Ռուսական եկեղեցեաց միաւորութեան խնդիրը 52

ՊԱՏՄԱԿԱՆ. — Մարիամայ աղբիւրը 54

ԳԻՏԱԿԱՆ. — Պատմութիւն մոմի։ — Ձաղկի պատուաստ։ — Առողջաբանութիւն, նպատակք և օգուտք նորա։ — Ալէքսի Գլէրոյ և երկրիս չափը 57

ԱԶԳԱՅԻՆ. — Ի ցադաքիայ գիւղօրէից մէջ քանի մի հայ բռ. ղբկանաց վերադարձը։ — Սիօնի գերեզմանատան խնդիրը։ — Քանի մի ժառանգացու աշակերտաց հաս. նիլը 61

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ 63

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ

Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի մէկ 16 երես բաղկացեալ ութածալ թղթով։

Բ. Տարեկան գինն է մէկ ու կէս արծաթ մէճիտիէ, կանխիկ վճարելի։

Գ. Ձանազրուելին ծախքն առնողն վճարայ է։

Դ. Ջատ տետրակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ տետրին 3 դահեկան վճարէ։